

ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՌՃԱՆԵԱՒ 1876 ԱՄԻՆ

ԱՅՈՒՑ ՇԵՏԵՐԻ, ԿԱՐՈՒՍ ՔԵՅԼԵՐ, ԿԵԿԵՆ-
ՊԱՐ, գերմանացի նշանաւոր գեղարուես-
տագործք:

ԲՈՒԳԻ, գաղղիացի անուանի բնազէտ:

ՊԱՐՈՆ ԱՇԿԵՆ, կաճաւորդ Գիտութեանց
ճեմարանին Գաղղիոյ:

ԱՅՈՒՑ ԹԵՌՊՈՐ ՊՐՈՆՅԱՐ, բազմաՀռչակ
գլխատու բուսարանութեան բնապատմա-
կան Մուզէոնին Բարիգու: Ծներ էր 14
յունուարի 1801:

ԱՐԲՐՈՍՈՍ ԲԱՐԵՆ, մշտնջենաւոր քար-
տուղար ճեմարանին Գաղղիոյ. բազմա-
Հմուտ յունազէտ և լատինազէտ, և քննա-
դատ մատենագիր. ծնած էր 'ի Բարիդ 21
օգոստոսի 1793: Չկար մէկն որ իրեն հա-
ւասար Հմտութիւն ունենար Հին մատենա-
գրութեան, որուն վրայ բազմաթիւ գովելի
գրուածներ հանած է:

ՅԻՐԵՆ ՏԻՏՈՑ Գաղղիացի աշխարհածա-
նօթ տպագրապետ և գլուխ գրապետաց
աշխարհի, միանգամայն նշանաւոր Հնա-
զէտ և Հնասէր, յունազէտ և յունասէր.
իր բազմապատիկ տպագրութեանց վրայ
վերջին տարիներս աւելցուց նաև Հայ
պատմագրաց թարգմանութեան տպա-
գրութիւնք, նպաստիւք բարձրապատիւ
Նուպար Փաշային, աշխատասիրութեամբ
Վիկտոր Լանկուայի և գործակցութեամբ
Մխիթարեան Հարց: Բայց այս տպագրու-
թիւնը կիսատ մնաց կանխահաս մահուամբ
Վ. Լանկուայի, և Գաղղիական ու Բրու-
սիական վերջին պատերազմին վրայ գա-
լով: Յիրմէն Տիտոյ ծնած էր 21 հոկտեմ-
բերի 1790, և իւր նախնիքն եօթն և տաս-
ներորդ դարէն 'ի վեր հետամուտ էին տը-
պագրութեան արուեստին, զոր ինքն ար-
տաբոյ կարգի պայծառացուց:

ՄԵԾ ԴԵՍՈՒՀԻ ՄԱՐԻԱՄ ՆԻԿՈՒՄԵԿԵԱՆ, քոյր
Վեհափառ ինքնակալին Ռուսաց Ազգե-
սանդրի. ծնած էր 18 ապրիլի 1810 և

վախճանեցաւ 21 փետրուարի: Քսան տա-
րեկան հասակին մէջ ամուսնացաւ Մեծին
Նաբոլէոնի որդեգիր Եւգենէոս Իշխանին
որդուցն Մաքսիմիլիանոսի Հետ, զուրք
Լայխզէնպէրկի, իշխան Ալիազէտի: Այրի
մնաց 1 նոյեմբերի 1852 և չորս տարի ետ-
քը կրկին ամուսնացաւ Գրիգոր Սգրոկո-
նով կոմսին Հետ, 16 նոյեմբերի 1856: Իշ-
խանուհիս շատ սրամիտ էր և սիրող գե-
ղարուեստից. շատ անգամ կը ընակէր 'ի
Փլորենտիա, ուր սերտ բարեկամութիւն
հաստատեր էր տեղացի ազնուուհեաց
Հետ, և բարի Համբաւ թողեր էր բարերա-
րութեամբն ու աղքատասիրութեամբն:

ՔՍԵՆՏԻՆՈՍ ԿՐԱՌՈՒՆ, իտալացի հար-
տարապետ, գլխաւորաց մէկն այն նկա-
յական ձեռնարկութեանն՝ որով Ալպեայք
ծակուեցան դէմ առ դէմ Մոն-Սընթի եր-
կաթուղին անցնելու համար, մեռաւ 1 ապ-
րիլի յետ երկար և ծանր հիւանդութեան:
Կրաղղոնի Հաղորդակից եղաւ նաև ուրիշ
բազմաթիւ Հատարակից շինուածոց, և շատ
մը հարտարարուեստական ընկերութեանց:
Գալուր ստէպ կը յանձնէր անոր գիտնա-
կան պաշտօններ առ արտաքինս, քանի մը
անգամ ալ երեսփոխան ընտրուեցաւ Բիե-
մոնդի ժողովարանին:

ԼՈՒՆ. ՔՍԵՆՏԻՆՈՍ ԷՅՍԱ, Գաղղիացի
գրագէտ. մեռաւ 'ի Բարիդ 30 մարտի, որ
ծնած էր 'ի Մարդինիկէ յամին 1814: Գրա-
ւորական առակին փորձերս լրագրութեան
ստպարիզին մէջ ըրաւ 'ի Բարիդ, յաւե-
լուածներ գրելով: Այլ և այլ վիպասա-
նութիւններ գրած ունի. բարուց, սովո-
րութեանց, ճանապարհորդութեանց վրայ
ալ շատ բան հրատարակեց. վերջերս ալ
Լրացիր Բամանորդաց (Journal des Ac-
tionnaires) ըսուած հրատարակութիւնը կը
խմբագրէր, առևտրական և ձեռնարուես-
տական գործոց զբաղելով: